Գառն եւ չափազանց դժուարին է եղել նորա գործունէութեան օրերը: Հալածանք, մտանութիւն, բանդ եւ պանդխտութիւն — այդ ամէնը կրել է նա իր կեանքի մէջ. բայց իբրեւ մի անուստն ժայռ, նա գիմացել է բոլոր փոթորիկներին եւ անասելի հաստատակա-

մութեամբ տարել է կեանքի ալիւմոսթիւնները՝ միշտ իրեն առաջնորդ եւ զեկավար ունենալով արդարութեան եւ իր ազգի սէրը:

Ահա այդ բարեմասնութիւններն էին, որոնք պատկառելի եւ սիրելի են արել Տ. Գաբրիէլի անունը բոլոր հայերի համար. եւ ահա թէ ինչպեւ նորա մահը չնայելով ութսուն եւ ութսուեայ դառնաեալ հասակին, դարձեալ վիշտ եւ տիրութիւն է պատճառուում ամենքիս:



200. Գաբրիէլ Աւագ քանանայ Պատկանեան

Բայց միեւնոյն ժամանակ էնչքան նախանձելի է այդ մահը: Փոխուելով այս աշխարհից այժմ նա համարձակ կարող է մտենալ ամենակալ Աստուծոյ գահի առաջ եւ հանդարտ խղձալ տնել Պօղոս առաքելի խօսքերը. «Տէր պարտքը պատերազմն պատերազմեցայ, զընթացին կատարեցի՝ դհուստուն պահեցի, այժմ կայ մնայ ինձ արդարութեան պատկն»: Եւ նա կ'ստանայ այդ պատկը, որովհետեւ իր ամբողջ կեանքով արժանի է եղել նորան:

Իւրեղելով մեր վերջին մտտ բարեւը այդ թանկագին դիակին մեզ մնում է միայն օրհնել մեծ մարդու յիշատակը:

«Յրճնեալ լինի քո յիշատակդ. բազմալատտակ ծերունի. եւ օրհնեալ լինեն այն բոլոր գործերը, որ դու կատարել ես քո սիրեցեալ ազգիդ համար: Դու թէ եւ մեռար եւ հեռացար մեղանից, բայց քո անունդ միշտ կ'ենդանի կը մնայ հայ ժողովուրդի սրտում, սրին

դու թողնում ես մի այնպիսի ժողովուրդին: որով պարծենում է եւ միշտ պէտք է պարծենայ հայկական մասող բանաստեղծութիւնը:

Յաւետեանս յաւետեանց թող օրհնուած լինի ըս յիշատակը, ծերունի Տէր Կարբէլէ: Ս. Պետրոսոյ. 1889, Ապրիլի 16:

Իր հրատարակութիւնները. — 1822 Վարդապետութիւն Ուղղափառութեան Հայ Եկեղեցւոյ. — 1823 Ընդարձակ պատասխան 1824 ին տեղի ունենալիք ծաղկապարտի պաշտօնականութեան. — 1825 Պատմութիւն Ալեքսանդր Մակեդոնացւոյն. — 1854 Սանդուխտ Կոյսի Մահը. — 1854 Մրմուռը Յիսուսի. — 1854 Հայ-

կերգ. — 1855 Արամբերգ. — 1856 Արայի Մահը. — 1857 Անուշուան. — Հռիփսիմէ. — Մահ Պարեաթի. — 1858 Զառէն և Փառնակ. — Պարոյր. — 1862 Նիկիոյ. — Հայոց Ազգի Պատմութիւն. — Միջնադէպ. — Ուսումն, Ուսուցիչը և Ուսումնարանը. — Երգազէր Պատմութիւն Հայոց. — Սանդուխտ Կոյսի Եզրօր Արտաշէս Մանկան Փրկութիւն. — Ծաղկաքաղ կենսագրութիւն Ներսէս Ե. Կաթողիկոսի:

Ա.Ղ.ՅԻՒՐԵՆԻ. — Արսի 1889 զիւր Ա. (Իննսկիեւագրութիւն). — Հայ պարբերական մամուլը Խ. Լեւոնեանց 107—110. — Հանդիս Ամստրամ 1889 էջ 87:

ՌՈՒՐԵՆ ԱՆԴՐԷԱՍ ՓԱՓԱԶԵԱՆ

1806 — 1857

Տէր Մանուէլ քահանայի որդի Տ. Յարութիւն քահանայի զաւակն էր Ռուբէն Անդրէաս Փափազեան որ ծնած էր Պոլսոյ Խաս-Գիւղ թաղին մէջ 1806 Ապրիլ 11-ին:

Անդրէաս իր ինը եղբայրներուն մէջ անդրանիկը կը յաճախէր Ներսէսեան Վարժարանը, ուր քիչ ատենի մէջ Գերականութիւն սովորեցաւ հոշակաւոր Յովհաննէս Պատուելիէն:

13-14 տարեկան դպրոցէն ելլելով չուկայ գնաց, սակայն ուսման սէրէն մղուած պարապ ժամանակներուն դաս առնել սկսաւ Գրիգոր վարժապետ Փէշաբաճեանէն:

Իր ուսման մէջ զարգանալը լսելով Պօղոս Պատրիարք զինքը իր Փոքրաւորը բրաւ և Սարկուազ ձեռնադրեց:

Փոքրաւորութեան ժամանակ կը շարունակէր տակաւին իր ուսմանը աշակերտելով Գէորգ Պատուելի Չափրաստեանի:

Բաճան տարեկանին իր ունեցած փափաքը կրցաւ իրագործել, այն է Եւրոպա երթալ աւելի յառաջացնելու համար իր մտաւոր պաշարը, և օրերով ամիսներով ծովերու վրայ շարժարուելէն ետք վերջապէս հասաւ Բապթիստ ուր մնաց 5 տարի և հոն յաջողեցաւ ուսանիլ Բապթիստ և Լատիններէն լեզուները:

1831-ին վերադարձաւ Զմիւռնիս ուր Մըկրտիչ Նուպարեանի առաջարկութեամբ Մես-

րոպեան Վարժարանին մէջ Բապթիստ և Հայերէն լեզուներու ուսուցչութեան և ներքին վերատեսութեան պաշտօնը ստանձնեց:

1835-ին Անդրէաս Վարժապետ իր պաշտօնը Մեսրոպեան Վարժարանին մէջ իր ի գործ դրած ջանքերուն երկու անգամ իր յառաջադէմ աշակերտներուն միջոցովը Բապթիստ թաւարան ներկայացնել կուտայ, որուն ներկայ կը գանձուէն քաղաքին երեւելիները, կը գաւազակով թէ այդպիսի ժամանակ մը՝ առաջին անգամ Հայոց մէջ թաւարան ներկայացնելու համարձակող անձ մը ինչ նեղութիւններ և առաւապանք կը կրէ: Անդրէաս վարժապետ ա՛նչուո՛ւն ալ սիրով կը ստիպէ: Հոգաբարձութիւնը որ կը բաղկանար Գրիգոր Կոստանդեանի, Ս. Պաղասանեանի և Յովհաննէս Նուպարեանի պէս լուսամբտ անձերէ աշակից և պաշտօնական կ'ըլլայ իրեն այս թաւարական գործին:

Բայց որքան որ հակառակորդները կ'աշխատէին Վարժապետին պաշտօնականներուն սիրտը պղտորել, անոնք ալ աւելի կը համակրէին արդիւնաւոր վարժապետին:

1839-ին Անդրէաս Վարժապետ Պօլիս կ'երթայ իր ծնողներուն քով, ուրկէ շուտով կը վերադառնայ և ներքին վերատեսչութեան պաշտօնին մէջ, աշխատութեամբ կը յարատեւեւ տարուէ տարի դպրոցական հարցաքննութեան

չքել հանդէսներ կը կազմէ և ժողովուրդը հիացումով կ'ունենդրէ զանազան ուսումներու մէջ աշակերտներուն տուած քաջ պատասխանները:

Իր հասցուցած աշակերտները հեազհետէ կը սկսին դպրոցական շրջանը աւարտելով կարեւոր դիրքեր գրաւել, 1840-ին Զմիւռնիոյ մէջ կը սկսի հրատարակել Արշալոյս Արարեսեան թերթը և կը հաստատուի Սիւրենաց Ընկերութիւնը՝ որուն զազափարը կը յղանայ ինք՝ Անդրէաս Վարժապետը:

Վարժարանին մէջ ապարան մըն ալ կը հաստատուի, որուն վերատեսչութիւնը Անդրէաս Վարժապետ իր վրայ առած էր:

Տպարանէն լոյս տեսած գործերուն մէջ կարեւորները են՝ Ոսկի Դար, Տրամաբանութիւն, Նարեկ, Սալմոս:

Գորոցէն ելլալ յառաջադէմ աշակերտներէն ոմանք ալ Հայկազեան Ընկերութիւն մը կը յազմեն, որուն նպատակն էր այլ և այլ գործեր, հեղինակութիւններ և թարգմանութիւններ գրատարակել:

1845-ին անուիլ հրդեհ մը Զմիւռնիոյ բոլոր Հայոց թաղը հրոյ ճարակ եղաւ բացի Մեսրոպեան Վարժարանէն, ինչ որ Սիւրենաց Ընկերութեան քայքայման պատճառ եղաւ, Վարժարանին ապարանն ալ այրելով իր անխնայներուն հետ ոչնչացաւ, նմանապէս Հայկազեան Ընկերութիւնն ալ չը կրցաւ վերակենդանանալ:

Ժամանակ մը Վարժարանը հրդեհէ ազատուած ընտանիքներու ազատանս ըլլալէ վերջ նորէն կը բարեկարգուի շտրիւ Անդրէաս Վարժապետի որ հետզհետէ աւելի կը փարէր գործին, արդէն իր հոշակը մինչև Պոլիս հասեր էր և մինչև իսկ Տատեան գերդատանը իր գաւակները Զմիւռնիոյ Մեսրոպեան Վարժարանը կը գրկէր, միւս կողմէ ալ ձեզայիլիան մեծանուն ամիրան կը թախանձէր Անդրէաս Պատուելիի որպէս զի թողու Զմիւռնիան և զայ Խաս-Գիւղի Ներսէսեան Վարժարանին մէջ պաշտօնավարէ:

Անդրէաս Վարժապետ 1849-ին միջոց մը Պոլիս կուգայ, սակայն շուտով կը վերադառնայ Զմիւռնիս:

Այ անիէ ետք միշտ ինտանտ գուրգուրանքով մը վերաբերած է իր դպրոցին վրայ և ունեցած է բազմաթիւ աշակերտներ որոնք պարճանք եղած են իրենց ուսուցչին:

1855 Յունիական հրեւոդացաւ, սակայն քանի մը ամիսներ վերջ առողջանալով սկսաւ շարունակել իր պաշտօնը:

Նոյն տարին 1855 Ապրիլին ըստ օրինի նոր հոգաբարձութիւն մը կ'ընտրուի՝ Վարժարանին համար, Անդրէաս Վարժապետ կ'ըմբռնէ թէ այդպէսով իր 25 տարիէ ի վեր ունեցած արտօնութիւնները սեղմել կ'ուզեն:

Օր մըն ալ ժողովը կ'որոշէ Տաճկերէնի ուսուցիչը Գրիգոր Գէորգեանը հրաժարեցնել և տեղը բերել ուրիշ մը՝ որուն անկարող ըլլալը կը զգար Անդրէաս Վարժապետ և կը փափաքէր որ նորէն նախորդը պաշտօնավարէ, ինքը արիւն-



201. Ռ. Անդրէաս Փափազեան

թեամբ կը պաշտօնանէր դպրոցին շահը այլ վերջապէս ճարանատ հոգաբարձուներուն յամառութեանէն 1856 Ապրիլ 6-ին կը հրաժարի Ս. Մեսրոպեան Վարժարանի ուսուցչութենէն, հոգաբարձուները վախնալով ժողովուրդին գրգռութեանէն՝ առ երեսու կը հրաւիրեն զինքը որ գործնապէս պաշտօնավարէ, բայց ինչ անդրուելի կը մնայ և քաշուելով կը սկսի դատախօսել իր տան մէջ՝ օրապահիկը ճարելու համար:

Ժողովուրդը երկուքի բաժնուած էր այդ պատճառաւ, մէկ մասը կ'ուզէր որ շարունակէ իր պաշտօնը Մեսրոպեան Վարժարանին մէջ, և միւս մասը կ'ուզէր որ ալ չը վերադառնայ նախորդ պաշտօնին, Աբրահամ Ապրո և Եւստոֆ Զէլէյի նամակներ կը գրկեն այդ առթիւ իրենց հայրենակիցներուն որպէս զի վերջ մը արուի այս երկպառակութիւններուն, սակայն ի գուր:

Անդրէաս Վարժապետ հոգաբարձուներու հետ տեսնուած ատեն հեղութեամբ կը խօսէր

որպէս զի ներդրամիտ ըլլան անցած դէպքերուն, բայց անոնք չը բաւականանալով այդ չափով կ'ուզէին որ գիր մը գրէ թէ ինք յանցաւոր է:

1855 Յունիս 18-ին իրեն առաջարկեցին որ ազլիանց դպրոցը ստուցչութիւն ընէ և մինչև անգամ ալ 1,000 դրուշ ամսական տալ խոստացան, բայց ինք մերժեց, նկատելով որ Այլիանց Վարժարանը երթալը իրեն անպատուութիւն պիտի ըլլար. — «Այս համարիմ յաղքատութեան կեալ, քան այնպիսի առաջարկութեան նոցա ընդունիլ»:

Վերջապէս նորէն կը բերեն զինքը Մեսրոպեան Վարժարանը բայց իր նախորդ պաշտօնը չեն տար. դպրոցը բոլորովին խանգարուած էր և չէր ուսուցիչին ալ թոշակը զեղչած էին, շատ չանցած Վարժարանին անմեղութիւնը յայտնուեցաւ, որով իրեն հակառակորդները ներշնչութիւն խնդրեցին իրմէ:

1857-ի Կաղանդին էր երբ Նոգարարձութիւնը լուծուեցաւ և նոր մը կազմուեցաւ, Անդրէաս Վարժապետ նորէն իր նախորդ պաշտօնը ստացաւ և սկսաւ ձեռնարկել բարեկարգելու անկարգ վարժարանը բայց զժբազդարար կաթնամանար եղաւ և Մարտ 6-ին վախճանեցաւ 51 տարեկան հասակին մէջ. 26 տարի անընդհատ Մեսրոպեան Վարժարանի ուսուցչութեան և վերապետութեան պաշտօնները վարելէ յետոյ:

Զմբուհիոյ Արշալոյս Արարեսեան թերթը իր 540 թիւին մէջ հետեւեալը գրած է.

«Իզմիրի Հայոց ժողովուրդը եւ Մեսրոպեան վարժարանը մեծ ու ցաւալի կորուստ մը ըրին»:
«Արժանապատիւ Պարոն Ռուբէն Անդրէաս Փափագեան Պատուելին, որ 26 տարիէ ի վեր Սուրբ Մեսրոպեան դպրոցին մէջ ներքին վերատեսչի եւ մեծ վարժապետի ծանր պաշտօնը կը վարէր խիստ արժանաւորութեամբ, ամուսն ճին չորեքշաբթի կէսօրէն ետեւ քանի մը ժամու մէջ առ Աստուած փոխուեցաւ յանկարծահաւ կաթնամանի աճապին հարուածով մը: Հետեւեալ օրը կէսօրին, հանգուցիւր յուզարկաւորութեան եւ թաղման տխուր հանդէսը խիստ փառաւոր եւ շքեղ կերպիւ կատարեցաւ: Թուան բաղմութիւն ժողովրդոց եւ Մեսրոպեան վարժարանին բարձր աշակերտները այս սգալի հանդիսին առջեւէն կ'երթային: Վարժարանին յարգոյ տեսուչները յուզարկաւորութեան մահազոյժ սեւ չախան բռնած էին մեռելակիր մատուկին առջեւէն, զոր կը բերէին իւր վաղեմի աշակերտները: Այս կերպիւ սգալի թափօրը հանգուցիւր ժողովին կ'ընթացէր, սուրբ Մեսրոպեան Վարժարանը հասաւ, ուր արժանապատիւ Տէր Մարգարէ քահանայն դամբանական սրտու-

առջ ձառ մը կարգաց զոր յաջորդ թիւերնուս մէջ պիտի հրատարակեմք:

Արժանապատիւ հանգուցեալը, 52 տարեկան եւ բնիկ Կաստանդուպոլսեցի Բասթեղէն էր, Իզմիր ամուսնանալով իւր բնակութիւնը հաստատեց այս քաղաքի մէջ, իւր խոհեմ եւ բարեխիտ բնակարանութեամբը, իւր առաքինի վարուքը յարգոյ եւ պատկառելի եղած էր ամէնուն առջեւ, եւ խիստ սիրելի իւր բոլոր աշակերտացը համար: Սուրբ Մեսրոպեան վարժարանին յառաջադիմութեան եւ բարեկարգութեան սկզբնաւորութիւնը՝ ըստ մեծի մասին անոր բարեխիտանք եւ եւանդուն աշխատանց ու ազգասիրական յարգութանց արգասիքն է: Քով հայկաբանութեան մէջ, քով Խոտեղէն լեզուին մէջ, լուսահոգի Պատուելին Գաղղիներէն եւ Լատիններէն եւս ըստ բաւականին տեղեակ էր եւ Մեսրոպեան դպրոցին մեծ պատիւ կ'ընէր իւր այս պատուական լեզուագիտութեամբը, եւ իւր պարկեշտ ու քաղաքավարական ընթացքովը եւ իւր սիրովը ընդունելութեամբը, որով կը յարգէր ազգային ու եւրոպացի երեւելի ճանապարհորդները, որ ի սկզբբանէ անտի յաճախ այցելութեան կուգան Հայոց դպրոցներուն:

Ահա այսպիսի է մեծ ու ցաւալի կորուստը, որուն վրայ կ'ողբան այսօր Իզմիրի Հայ ժողովուրդը եւ Մեսրոպեան դպրոցին աշակերտները:

Յիշեալ դպրոցը՝ ի նշան սգոյ դոց պիտի մնայ մինչև երկուշաբթի օրը»:

(Արշալոյս Արարեսեան թիւ 540):

Ահաւասիկ իր դամբարանին արձանագրութիւնը.

Ռուբէնի
Անդրէաս
Փափագեան
Բարեջան քաջի
եւ
Բազմադիւն
Վարժապետի
Ս. Մեսրոպեան
Վարժարանին
Զմբուհիոյ
Զոր ծաղկեցոյց
Զամս քան եւ վեց
Կանգնեցին
Աւակերտք իւր
Շնորհապարտք
Ծնեալ ի 14 Ապրիլի 1806
Փոխեալ յաւեսագս ի 6 Մարտի 1857

Ա.Ա.Բ.Ի.Բ.Ի.Բ.Ի. — «Կենսագրութիւն Ռ. Անդրէաս Յ. Փափագեանի» (Ս. Փափագեան 1858). — «Հայք ի Զմբուհի» (Հ. Բոսեան). — Տարեցոյց Նոսի-Պապիկեան (Մ. Նուպարեան). — Արշալոյս Արարեսեան թիւ 540:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔՅՆՅ. ՏԵՐԶՆՑԻ ԵՒ ԻՐ ՈՐԴԻՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐԻԶ

(ՏՊԱՐԱՆ ՀՈՌՎՄ, ՎԵՆԵՏԻԿ 1584—1587)

Քահանայ մըն էր Յովհաննէս Տէրզնցի Ամբի կամ Տիգրանակերտ քաղաքէն՝ որդի Խանէսի, յայտնի չէ թէ ինչո՞ւ Տէրզնցի կոչուած է:

Իր կալակցին՝ Ինայրբաշէի մահուամբ երկու ազլիկ, և եօթ տարեկան մանչ մը սրբ կը մնան:

Ինչ պատճառաւ ձերբակալուած է, անշուշտ ենթադրութեամբ կամ կոտորածով եղած գործ մըն էր այդ բանը որովհետեւ անմեղութիւնը հասկցուելով, ոչ մըայն զինքը կը թողուն այլ և գործելու ազատութիւն և ստպարէզ կը շնորհեն Վենետիկի մայրաքաղաքին մէջ:

Ահաւասիկ այդ յիշատակարանը.

«Այս է տալ և յիշատակարան ի վերայ անտանս.

«ամ ես զերեսս՝ ձեր տապ կոխան, ունկն դնել պատուի բանին, Որ ես պատմեմ փոքր մի զանցս իմ զեղեալս իմ ի գոյն տալիս:

«Երբ սր եղէ այրի գերիս՝ ի Համբի մայրաքաղաքին, Մնաց երկու ազլիկունս և տղայ մի եօթնամի.

«Ճախճան-են տանցիալն տարակուսիլ ես իմ անձին. Եհան զիս յիմ որբերացն, ած ի Հոսոմ յերկիրն Լատին:

«Սորժամ կամեցայ յես դանտալ, զի վերջ արի զիմ առաջին, Քահան աւուր ճանապարհք չսքա միամիտ յիմ ճանապարհին.

«Երոյ վկայ է Տէր Աստուած՝ որ ծածկատես ամէն գաղանին.

«Զի վնաս ինչ ոչ գործեցի՝ զի արժանի լինի բանախն.

«Բանս իմ մեղացն որ յառաջ կայր՝ որ ինչ գործեալ յիմ երկրին, Փութանակի աստի հասան մի ըստ միով կա...»

«Երբ երբոր այն պատահեցաւ լեցին, Ի Հոսոմայ թուգա առաքեցին ի քաղաքին... ասեն...»

1587 թուականին Տէրզնցի Վենետիկի մէջ սպազբած է Սաղմոսարան մը որուն սկիզբը կը գտնուի իրեն և իր որդւոյն Խաչատուրի պատկերները (տես թիւ 202) և նաև հետեւեալ յիշա-



202. Տէր Յովհաննէս քհնյ. Տէրզնցի

1583ի միջոցներուն, կարօտութեան և կամ ուրիշ որ և իցէ պատճառով կը ստիպուի Հոսոմ երթալ:

Հոսոմ երթալով հոն կը ծանօթանայ Աբգարի որդւոյն Սուլթանչահի և որուն ընկերանալով կը սպազբէ 1584ին Գրիգորիան Տումարը: Ամուսնոյն մահուանէն շատ տարի ետքն է անշուշտ որ այդ ճանապարհորդութիւնը ըրած է որովհետեւ իր հետն է նաև իր Խաչատուր որդին, չափահաս պատանեակ մը, զոր իրեն օգնական կամ ինչպէս ինք կը յիշէ թելադրէն կը կոչէ իր ձեռք զարկած գործին:

Այս սպազբութիւնը յաջողցնելէն ետք (1585—1586) կը մտադրէ հայրենիք վերադառնալ և արդէն քասնօրեայ ճամբորդութիւն ըրած էր, երբ անակնկալ կերպով զինքը կը բռնեն ու կը բանտարկեն, ինք բանտարկուելու արժանաւոր յանցանք կամ վնաս մը ըրած չըլլալը կը գրէ յիշատակարանի մը մէջ, և յայտնի չէ թէ

տակարանը. «Յիշա՛ զմեզ Տէր յորժամ դաս արքայութեամբ քո և սղորմեա մեզ. Տ. Յովհաննէս Տէրղնցին և որդին Սաչատուրն ծառայք Աստուծոյ և յիշողաց, ՌԼԵ (1035=1386): Յիշատակարան է սակաւիկ փառք Ամենասուրբ Երրորդութեան Հօր և ... Աւարտեցաւ գիրս ձեռամբ Տէր Յովհաննէս Տէրղնցոյս և սրբւոյ իմոյ Սաչատուրին ի թվին ՌԼԶ (1036=1387) ի մայրաքաղաքն Վինետիկ, ընդ հովանեաւ Մարկոս աւետարանչին ի թագաւորութեան Պասքուալ Զրիմիւնի. ի պատրիարքութեան Զուան Թրիգանայի, և Քանատուն Զուան Ալբերդին, ձեռնասուր Սօճայ Եանուսուեն և հոգեւոր սրբւոյն իմոյ Սանփաննոսին և այլ Զուլեցոյց զոր Տէր Աստուած սացէ ըստ սրախց իւրոց: Այլ զկարասեա Բալչեցին յիշեցէք ի Քրիստոս զուր բազում օգնութիւն հասոյց մեզ: Այլ և զերեսս արկանեմք սախց ձերոց մոխրամածեալ և արտասուայից հառաչմամբ հայցեմք և մա լիմեմք ի ձէնջ. զի մի սղորմայիւ արժան, առնէք զկենտիկ իմ զԻնախրփաչէն և զմայր: իմ զՄարիամն և զհայրն իմ զՍանէսն զփոխեալքն առ Աստուած, և յիշողայն և յիշեցիոյս Աստուած սղորմեցի յիւր միւսանգամ գալուսան ամէն:»

Տէրղնցի իր սրբւով Վենետիկէն կ'անցնի Մարսէյ և հոն հայերէնի կը թարգմանէ Le Chevalier Paris et la belle Vienne անուն վիպասանութիւնը ստանաւոր չափով, ինչ որ 1387ին սակայն, Փարիզի մասնաաղարանին մէջ գտնուած սոյն գործին նմանութիւնը չունի, կ'երեւի ուրիշ նման գործէ մը թարգմանած և կամ հետեւողութեամբ գրուած է: Գրքին վերջը հետեւեալ յիշատակարանը կայ.

«Յիշատակ թարգմանչի տառիս.
 Զարիւք պինտ լի երես որ կայ
 Տրորեալ մածիմ սասցդ վերայ.
 Եղբայր, լեզուով մի յիս գըթայ,
 Բամեալ հոգուս սղորմի տայ.

Յորդ արտասուօք դոչեմ աճա,
 Ոչորմեցէք սրպէս Յովրայ.
 Վկայն իմ Տէրն է, կրկին վկայ.
 Ազալակեմ, ձայնրս կու գայ.
 Նա սր առէ մի Տէր սղորմեա՝
 Եղկելոյն այ՛ որ կու կենայ,
 Ի յա(ն)դենին առնու և ինդայ:
 Տրամադրեալ սա ի Ֆրանցայ
 Էր ի քալաքն Մասչիլիա.
 Բամիլ թուխ մերոյս Հայկայ
 Զերդ և հազար և երեսուն կայ,
 Նայ աւելի եւս վեցամեայ.
 Յվերջ ամառն յամաց սոցայ.
 Որ և երկրիս այս մեծ արքայ
 Յինրիքոս (Ենրիկոս 2) կոչեն գնա:
 Այլ ես յորդովք քաղաքս ուղղայ.
 Սիրաս իմ կամի որ միշտ երթայ.
 Այլ ճանապարհս երկրի սորայ՝
 Յամաքն և ծախ կապեալ մնայ:
 Յաւտարութիւնըս մաշեցայ,
 Որ ի երկիրն Ֆրանցայ.
 Այս ինչ ցաւ է, կայ և մնայ:
 Կատարեցաւ բանս»:

Ասոյ գործը հայերէն չափով թարգմանուած է Փռանկ լեզուէ, որ եթէ ուրիշ լեզուագէտի օգնութեամբ ալ եղած ըլլայ, դարձեալ արդիւնաւոր է Յովհաննէս, քանի որ հին Փռանկ լեզուն և սճր դժուարին է:

Տէրղնցի Հում եղած ատեն 1383 թուականին, Հայոց վերակացու կամ իշխան անուանուած Սուլդանշահի (Արզար ապագրչի որդին) և ուրիշ գլխաւորաց կողմէ երկայն նամակ մը գրած է արձակ և ստանաւոր Երուսաղէմի Գառիթ Պատրիարքին, հրա իրելով որ ընծաներով Հումմ գայ և աննէ Գրիգոր ԺԳ. Պապուն բրածները մանաւանդ նոր տամարի հաստատութիւնը, զոր և յաջորդ տարին 1384ին թարգմանելով ապագրեց Հումմի մէջ:

Ա.Ղ.ԲԻԻՐՆԵՐ. — Պասն. Հայկ. սպագրութիւն Զարբեանի. — Հայ-Վեհեհ. Ալիբան. — Պասն. սպագր. ԼԵՕ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ Պ. ԽԱԼԻՊԵԱՆՑ

1790 — 1871

Յարութիւն Պ. Սալիպեանց ծնած է Նոր-Նախիջևանի մէջ 1790 Փետրուար 22ին, իր պապն էր Յարութիւն Ապանդարեան որ յետոյ կոչուեր է Սալիպեան, 1760 թուականին Յարութիւն ազա Սրիմէն եկած է Ազուլիս քաղաքին քովերը գիւղ մը: Սրիմու այդ քաղաքը Թէոդոսիա, իր բնակութիւնը հաստատելով, սեղուոյն Անեցի ժողովուրդին հետ մտերմացեր և մեծ յարգ ու պատիւ ստացեր էր, երբ Սրիմու Հայերը Նոր-Ետիքիւն գաղթել կ'ուզեն 1777ին, ժողովուրդը զինքը պատգամաւոր կ'ընտրէ որ երթայ Ազուլի կողմերը և իրենց յարմար տեղ մը ընտրէ բնակութեան համար: Այդ գործը յաջողութեամբ աւարտելով դարձեալ ժողովրդին խնդրանքով Պետրբուրդ գացեր է ուր՝ Նախիջևան գացող Հայերուն համար Կատարինէ կայսրուհին ընդուներ է պարգեւադիր մը որուն առանձնաշնորհումները երկար տանն վայելցիցին Նախիջևանի Հայերը:

Յարութիւն ազա Փեթիկոսյուրբի մէջ կը վախճանի, իր որդին Պօղոս Սալիպեան Նախիջևան գացող ժողովրդեան գլխաւորներէն ըլլալով, մեծամեծ օգնութիւններ կ'ընէ ժողովուրդին և Ռուս տէրութեան կողմէն ալ աստիճանի արժանանալով կը վախճանի ազայ հասակին մէջ որը թողով Յարութիւն Սալիպեան իշխանը:

Յարութիւն իր նախնական կրթութիւնը կը ստանայ Կատանդնուպոլսեցի Յովհաննէս վարժապետէն, իր ընկերներուն մէջ ամէնէն յառաջադէմը կ'ըլլայ, այնպէս որ երկու տարուան մէջ կը սովորէ քերականութիւն և ճարտասանութիւն: Ամուսնացած է 1815ին, վեհայանալով Նախիջևանցի Օսապաչեան Գէորգի:

Յարութիւն Սալիպեան չորս անգամ չարունակաբար ընտրուեցաւ Քաղաքական գլուխ (Ռուսերէն Կոյովա) պաշտօն, զոր վարեց տասներկու տարի և Տէրութեանէն ընդունեց Խորհրդական պատուոյ աստիճանը:

Սալիպեան Յարութիւն իշխանը պարզ և համարձակ, միանգամայն խոհեմ ու խորագէտ բնասարութեամբ և գործունեայ, հայրենասիրութեամբ սիրելի և պատկառելի եղած է թէ

քաղաքացիներուն և թէ Տէրութեան նոյն ժամանակի քաղաքագէտներուն, որոնցմէ օգտուելու գեր է իր անձէն աւելի ազգին պէտքերուն համար: Իր իշխանութեան ժամանակ Նախիջևանի ազատութիւնները և արտօնութիւնները անթերի պահպանել յաջողելով՝ քաղաքին մեծամեծ օգուաներ բրած է: Երկու անգամ Նախիջևանը ազատած է ծանր պարտքերէ որ Տէրութիւնը կը պահանջէր՝ ժողաւորայէս 442 հազար ռուպլիէն աւելի, Սալիպեան այդ պարտքէն ազատելէն զատ նաեւ քաղաքին մէջ հաստատած է դեղարան, գաւառական դպրոց և թղթատուն, սակէ զատ դատական գործերուն լու ուղղութիւն մը տուած էր որով 1844-ին՝ երբ կառավարութեանէն քննիչ եկած է, գոհ մնալով ի վարձ իր ծառայութիւններուն Տէրութեանէն ընդունած է անգամ մը թանկագին ժամացոյց և երկու անգամ ալ Զարին կողմէ բարեհաճութեան նամակ:

Իր գործերուն մէջ ամէնէն նշանաւորն է երջանկայիշատակ Ներսէս Աշտարակեցի Կաթողիկոսին հետ ունեցած մտերմութիւնը և իրեն յանձնուած ծանր պաշտօնը (*):

Ներսէս 1805 թուականէն մասնաւոր համակրանք ունեցաւ իշխանին վրայ երբ ան պատանի՝ Յովհաննէս Վարժապետի քով կը սովորէր: Ներսէս այն ատեն ծայրագոյն վարդապետ էր:

Յետոյ 1828-ին երբ առաջնորդական պաշտօնով Թիֆլիզէն Քիշնեւ կ'երթար, Նախիջևանէն անցած ժամանակ դարձեալ մտերմացաւ Յարութիւն իշխանին հետ, իսկ 1842-ին սկսուանոր յանձնել վիճակին մէջ եղած կեկեղեցական դրամները ժողվելու, ցրուած գումարները հաւաքելու և իր քովը ամբողջ պահելու հոգը: Տեսնելով այս գործին մէջ անոր ցոյց տուած եռանդը և հաւտարմութիւնը, հեռզհեռ այնքան աւելցուց անոր վրայ վստահութիւնը որ վիճակին հագեւորական դատարաններուն վերաւտեսաչ անուանեց, Կաթողիկոս ըլլալէն ետքն ալ

(*). Ընթերցողը կարգաւորով Պատկանեան քահանայի կենսագրականը կրնայ լու գողաւոր մը կողմէ Սալիպեանցի մասին:

Մայր-Աթուին գործակատար անուանեց զինքը : Այսչափ վստահուած պաշտօններ , ոմանց չափազանց երեւցան և անա ժողովուրդը կուտակցութիւններու բաժնուեցաւ որ տեւեց քանի մը տարիներ , մինչև որ Իշխանը իր հաշիւները ներկայացուց և բոլոր դրամները յանձնելով իր նարբատութենէն ալ մաս մը արտօնողրեց Նախիջևանի Ս . Խաչ վանքին մէջ եկեղեցական վարժարան մը



203. Յարութիւն Պ. Խաչատրեանց

բանալու համար , այն տեղը , ուր երջանկայիշատակ Հայրապետը մասնանիշ ըրած էր :

Ասկից զատ 1859 Յունիս 23ին Սալիպեան Իշխան իր աւանը հրախրելով Առաջնորդը Բէկնաղարեանց Յովհաննէս վարդապետը և քաղաքին գլխաւոր իշխանները ամէնը 14 անձ , աւանց կը յայտնէ թէ կ'ուզէ Թէոդոսիոյ մէջ բացուելիք Ազգային Ուսումնարանին շէնքին ծախքը ինքը տալ այն է 200,000 ֆրանք , Առաջնորդը շնորհակալութեամբ կ'ընդունի այս խոստմունքը և մեծանուն բարերարին խոստում կուտայ որ դպրոցին անունը ըլլայ «Սալիպեան Ուսումնարան Ազգիս Հայոց» և քսան աշակերտներ ձրի դաստիարակութիւն մէջը «Սալիպեան Սանք» անունով , այս մասին թուղթ մը գրուեցաւ և ներկաները իբր վկայ ստորագրեցին :

Այսպէս Թէոդոսիոյ Ուսումնարանին հաստատութիւնը տեղի ունեցաւ 1860ին :

Նոյն տարին Մայիս 17ին կ'օծուի Ս . Յարութիւն եկեղեցին որ նոյնպէս Իշխան Յարութիւնի ձեռնադրութեամբ շինուած է : Սալիպեան

եան նաեւ Տպարան մը բացաւ Թէոդոսիոյ մէջ Ուսումնարանին մօտ , ուր բաւական դրքեր տրւողարեցան . հեղինակուած Գարրիէլ Եպիսկոպոս Այվազովսքիէ և Գալֆանան Ամբրոսիոս Սորէն վարդապետներէ , «Մասեաց Աղաւնի» և «Ծիւածան Հայաստանեայց» թերթը իր հինգերորդ տարիէն սկսեալ կը տպուի Սալիպեան տպարանին մէջ : (Տես թիւ 197)

Մեռած է 1871 Ապրիլ 24ին :

Հաճոյքով կը հրատարակենք Հ . Սիմօն Երամեանէ Սալիպեան վարժարանի մասին զեղեցիկ մէկ գրուածքը :

ԽԱԼԻՊԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Հիմնադիրն է Գարրիէլ Արքեպիսկոպոս Այվազեան : Մեր հայկական նշանաւոր անձնաւորութեանց շարքին մէջ , երբեմնի Մխիթարեան այդ գէժքը , իր ազգանուէր գործունէութեամբ հաճաւոր գիրք մը ունի : Արդիւնաւոր է իր կեանքը , վասն զի պալաքերելու գաղանքը իրեն ծանօթ էր : Գիտցեր է համակրելի ըլլալ : Գրուիչ քաղաքական ընաւորութեամբ օժտուած՝ յաջու իր է յազմել խոչընդոտները , և իբրազործել այն դադափարները որ իրեն ամար բարի և օգտակար երեւցեր են : Ազգին մէջ արդէն պակաս չէին նշանաւոր ուսումնարաններ , ատոնց հետ մրցելու համար , պէտք էր ոչ միայն բարոյական այլ և նիւթական մեծ ուժ : Վարժարան մը հիմնելու համար չեն բաւեր տաղանդ , գիտական պոչար , դաստիարակութեան ընդունակութիւն : Դրա՛մ , յաւիտենական դրամ մը անհրաժեշտ է :

Այվազեան՝ Սալիպեան վարժարանը հիմնելու գաղափարով օրօրուած , միայն իր ուսումնական պաշարը ապահով կը տեսներ : Դրամը կը պակսէր : Ինքը գիտէր խոչընդոտները սանակոխ ընել : Երբ Փարիզ էր , կ'աշխատէր Ռուսաստանի մէջ կանգնել վարժարան մը , ո՛չ տարրական այլ բարձրագոյն : Այդ իր նպատակին համեղու համար , կը թղթակցի Ռուսաստանի պաշտօնական անձնաւորութեանց հետ : Ռուսին արամազրութիւնը Այվազեանի համար նպատաւոր էր : Գալափարի տէր վարդապետը կ'երթայ Կ . Պօլիս և հոն Պատրիարքարանի նշանաւոր անձնաւորութիւնները շահեկան կը գտնեն Ռուսաստան հայ վարժարան մը հիմնելու գաղափարը :

1857 Յունիս ամսոյն սկիզբներն Այվազեան իր հայրենիքը՝ Թէոդոսիա էր : Կը գիտէ հանրութեան արամազրութիւնը , ամէն մարդ իրեն

«ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ» պիտի հրատարակուի պրակ առ պրակ ամիսը անգամ մը, ամբողջ թիւնը պիտի բաղկանայ 48 պրակներէ 4 հատորի մէջ ամփոփուած և պիտի պարունակէ երեւելի ազդայիններու լուսանկարները, կենսագրութիւնները և ձեռագիր անտիպ գրուածքները, կաթողիկոսներու և պատրիարքներու կոնդակները և այլն:

Կը շարունակուի Բ. Գ. Դ. հատորներու բաժանորդագրութիւնը 80 դրուչի:

Կոչում կ'ընենք հասարակութեան և բանասէրներու մեզ ուղարկել իրենց քով յունեցա սօքիւմանները, ըլլան լուսանկար թէ ձեռագիր և կամ կենսագրութիւններ որոնք անվճար իրեն կը վերագարձենք դարձեալ:

Ամբողջ գործին բաժանորդագրութիւնն է կանխիկ մէկ օսմանեան ոսկի ամէն տեղի համար, իւրաքանչիւր հատորի համար 30 դրուչ:

Բաժանորդներու անունները պիտի հրատարակենք հեռզհեռէ:

Գործը պիտի աւարտի մինչև 1912 տարուայ սկիզբները և բաժանորդները պիտի ստանան իբր նուէր գեղարուեստական շքեղ կողբեր որոնք արուեստասէրներու յանձնած ենք պատրաստուելու համար և որոնք խորհրդանշանը պիտի ըլլան Հայ. Տպագրութեան 400 ամեայ Յօրեկեանին:


Վստահ ենք թէ Հասարակութիւնը պիտի զնահատէ այս գործը որ բազմաձախս եղած է և որուն համար տարիներով տքնած առուպած ենք:

Հրատարակուած է արդէն առաջին հատորը որ կը վաճառուի 30 դրուչի Պոլիս Զարդարեան գրատուն, Բերա Վայսի գրավաճառատունը, Ալեքսանդրիա Յ. Ղազիկեանի և Օ. Գարսնձեանի և Գահիրէ Սուրէն Զարմաքձեանի քով:

Մեկ պրակի գինը 2 դրուչ, գաւառներու համար 400 փարա:

Իմել Զարդարեան Գրատուն, Պոլիս, Զաւմաքնըլար, 24—26:

Կը ծախուի ամեն տեղ:



4. 21

Մ Ե Բ Վ Ճ Ա Բ Ո Ղ Բ Ա Ճ Ա Ն Ո Ր Գ Ն Ե Բ Ը

Հեռզհեռէ կը հրատարակենք անունները մեր բաժանորդներուն որոնք կը վճարեն իրենց բաժնեգինը, ասիկա կ'ընենք ամէն անոնց համար որոնք կ'ուզին վստահ ըլլալ. անոնք որ կը վճարեն և անունին հոս չեն տեսներ, անմիջապէս պէտք է մեզ իմաց տան:

		Ղրջ.	5550
74. — Գեր. Կարապետ եպս. Մազրլսեան (Պալրֆեուր)	Ա. Բ. հասորի		54
75. — » Գեորգ Վ. Նալբանդեան (Սրդերդ)	Ա. »		30
Տեարժ			
76. — Կամարաբեան (Բաքերսըն)	Բ. Գ. Դ. »		80
77. — Յովհաննէս Շիւմանեան (Մարաւ)	Ա. »		30
78. — Յակոբ Կիւլպէնկեան	Բ. »		30
79. — Գրիգոր Արմոնի	Ա. »		30
80. — Նուանդ Պէլագեան	Բ. »		30
81. — Գառնիկ Սարգիսօճ	Ա. »		30
82. — Միհրդատ Համբարձումեան	Ա. Բ. »		54
83. — Մեղիսեղեկ Մեղիքեան (Սամսոն)	Բ. Գ. Դ. »		80
84. — Գրասեւր մը	Ա. Բ. »		60
85. — Շասախի ժողովրդային Գրագարան	4. »		408
86. — Տիկին Ա. Նեյֆեհեան	4. »		408

« Ազգային գրադարան



NL0251056

